ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Միջոցառումը	Ակնկալվող անմիջական արդյունք	Ժամկետը	Կատարման ընթացքը
ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1063-Լ որոշում				
1.	Պետական կառավարման համակարգի մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործառույթների իրականացման համար ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքների վարձակալության գործընթացի կանոնակարգում, ինչպես նաև ոչ պետական տարածքների պետական տարածքներով փոխարինելու ուղղությամբ գործողությունների ծրագրի մշակում և իրականացում	Կոմիտեի կողմից պետական մարմինների և կազմակերպությունների կողմից վարձակալված ոչ պետական տարածքների հաշվառում, այդ տարածքների նկատմամբ պահանջի բացահայտում և պետական տարածքների հաշվին պահանջի բավարարման համար տարբերակների մշակում և առաջարկում: Տվյալ գործընթացի կանոնակարգման շնորհիվ (իրավական ակտի մշակում) ՀՀ պետական բյուջեի և ոչ այլ միջոցների հնարավորինս արդյունավետ և նպատակային օգտագործում, ինչպես նաև այդ բնագավառում կամայական մոտեցումների բացառում:	2022 թվականի 4-րդ եռամսյակ	Տվյալ կետի կատարումն ապահովելու համար ձեռնարկվել են քայլեր ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վարձակալության վճարի դիմաց պետական կառույցների կողմից օգտագործվող ոչ պետական սեփականություն հանդիսացող տարածքները պետության սեփականությունը հանդիսացող համապատասխան տարածքներով փոխարինելու, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքներ վարձակալությամբ վերցնելու գործընթացների կանոնակարգման ուղղությամբ, որի շնորհիվ կնվազեն ՀՀ պետական բյուջեի ծախսերը: Կոմիտեն մշակել և ՀՀ կառավարության կողմից 2022 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է «Պետական կառավարման համակարգի մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործառույթների իրականացման համար պետական սեփականություն հանդիսացող տարածքով ապահովելու կամ դրա բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքները վարձակալությամբ ձեռքբերման կարգը հաստատելու մասին» N 2057-Ն որոշումը:
2.	Պետական գույքի գնահատման գործիքակազմի բարեփոխման ուղղությամբ իրավական նոր մոտեցումների մշակում և ընդունում՝ նպատակ ունենալով հնարավորինս	Պետական գույքի գնահատման դաշտը կանոնակարգող իրավական ակտի բարեփոխման շնորհիվ պետական գույքի	2022 թվականի 4-րդ եռամսյակ	Կոմիտեն մշակել և ՀՀ կառավարության կողմից 2022 թվականի օգոստոսի 4-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1196-Ն որոշումը:

	կրճատել գնահատման գործընթացի ընդհանուր տևողությունը, բացառել կրկնակի գնահատումները և հնարավորինս տնտեսել գնահատմանը տրամադրվող միջոցները	մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման գործընթացների ընդհանուր տևողության կրճատում, կրկնակի գնահատումների բացառում, կառավարման գործընթացում օպերատիվության մակարդակի բարձրացում, վարչարարության պարզեցում:		Որոշմամբ հնարավորինս կրճատվել է պետական գույքի մասնավորեցման, օտարման և օգտագործման տրամադրման գործընթացներում գնահատման ընդհանուր տևողությունը, բացառվել կրկնակի գնահատումները և հնարավորինս տնտեսվել են գնահատման տրամադրվող միջոցները:
3.	Պետական գույքի օտարման բնագա-վառում նոր գործիքակազմի ներդրման ուղղությամբ գործողությունների ծրագրի կազմում և իրականացում, մասնավորապես. պետական գույքի վաճառքի գրավչության բարձրացման և քաղաքաշինական ու այլ սահմանափակումների, ինչպես նաև ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների իրականացում և այդ նպատակով բարձր արժեք ու իրացվելի գույքի նկատմամբ 100 տոկոս պետական մասնակցությամբ կազմակերպության (կազմակերպությունների) ստեղծում և դրա (դրանց) բաժնետոմսերի վաճառքի կազմակերպում	Վաճառքի ենթակա պետական գույքի գրավչության և իրացվելիության մակարդակի էական բարձրացում, խոշոր ներդրումային ծրագրերի իրականացումը խթանելու համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում և ներդրումային միջավայրի բարելավում: Արդյունքը. ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում մինչև 20 տոկոսի չափով, ինչպես նաև ներդրումների ծավալի էական ավելացում	2023 թվականի 4-րդ եռամսյակը	Պետական գույքի օտարման բնագավառում նոր գործիքակազմի ներդրման ուղղությամբ գործողությունների ծրագրի կազմում և իրականացում,մասնավորապես.պետական գույքի վաճառքի գրավչության բարձրացման և քաղաքաշինական ու այլ սահմանափակումների,ինչպես նաև ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների իրականացում և այդ նպատակով բարձր արժեք ու իրացվելի գույքի նկատմամբ 100 տոկոս պետական մասնակցությամբ կազմակերպության (կազմակերպությունների) ստեղծման և դրա (դրանց) բաժնետոմսերի վաճառքի կազմակերպման նպատակով ՀՀ կառավարության կողմից 17.08.2023թ. ընդունել է «Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ ստեղծելու մասին թիվ 1404-Ա որոշումը: Նույն որոշման համաձայն ընկերության կանոնադրական կապիտալում պետք է ներդրվի Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ քաղ. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փողոց 28 հասցեում գտնվող՝ 7809,9 քառ. մետր վարչական շենքը և դրա զբաղեցրած 0,262 հա հողամասը: Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 17.10.2023 թ. N 479-Ա հրամանով հաստատվել է ընկերության կանոնադրությունը, իսկ 15.11.2023 N 518-Ա հրամանով նշանակվել է տնօրենի ժ/պ:

				Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2023թ. նոյեմբերի 23-ին կատարվել է «Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ-ի պետական գրանցում, գրանցման համարը է 286.130.1354455: Շրջանառության մեջ է դրվել ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 17-ի թիվ 1404-Ա որոշմամբ ստեղծված «Ռիփաբլիք Պլազա» փակ բաժնետիրական ընկերությունն ընդգրկել մասնավորեցման ցանկում:
4.	Մասնավորեցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակն օպտիմալացնելու և մասնավորեցման գործընթացն ավարտելու, ինչպես նաև արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստելու համար պետական գույքի մասնավորեցման նոր ծրագրի մշակում և ընդունում	Մասնավորեցման ծրագրում ֆոնդային բորսայի միջոցով մասնավորեցման ենթակա նոր ընկերությունների ընդգրկում, մասնավորեցման ոչ ենթակա պետական մասնակցությամբ ընկերությունների թվաքանակի սահմանում, նպաստավոր ներդրումային միջավայրի ստեղծում	2024 թվականի 3-րդ եռամսյակ	2023 թվականի ընթացքում մշակվել և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմի քննարկմանն է ներկայացվել «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է Ռիփաբլիք Պլազա» ԲԲԸ-ն ընդգրկել մասնավորեցման առաջարկվող ընկերությունների ցանկում: Միաժամանակ մասնավորեցման ծրագրում փոփոխություն կատարելու նպատակով ՀՀ կառավարության 05.10.2017թ թիվ 1262-Ն որոշման համաձայն՝ 2022 թվականի տարեկան տվյալների հիման վրա վնաս ձևավորած 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետագա կառավարման մասով Կոմիտեի առաջարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի բարելավմանն ուղղված միջոցների վերաբերյալ պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված պարզաբանումները և առաջարկների վերաբերյալ դիրքորոշումները ներկայացվել են ՀՀ կառավարություն: Տեղեկացնում ենք, որ 21 ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասերը կամ դրանց մի մասը մասնավորեցնելու վերաբերյալ Կոմիտեի առաջարկները պետական կառավարման մարմինների կողմից չեն ընդունվել:

5.	Պետական գույքի կառավարման գործընթացը կանոնակարգող օրենսդրության բարեփոխման ուղղությամբ գործողությունների ծրագրի մշակում և իրականացում, մասնավորապես, պետական գույքի մասնավորեցման և կառավարման գործընթացը կանոնակարգող երեք ներկայումս գործող ՀՀ օրենքների հիման վրա նոր մեկ ընդհանուր «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի մշակում՝ սահմանելով պետական գույքի արդիական նպատակներ, խնդիրներ և սկզբունքներ, կապված կառավարման առաջնահերթությունների փոփոխության հետ:	Պետական գույքի կառավարման ոլորտում կառավարման առաջնահերթ թիրախների սահմանում, մեկ օրենքի միջոցով պետական գույքի կառավարման գործընթացի կանոնակարգում, կանոնակարգման պարզեցում, հստակեցում, վարչական քաշքշուկների վերացում, որոշումների ընդունման ժամկետների կրճատում, կառավարման օպերատիվության բարձրացում	2024 թվականի 1-ին եռամսյակ	Կոմիտեի կողմից իրականացվում են մեկ միասնական օրենսդրական ակտի մշակման նախապատրաստական աշխատանքներ մասնավորապես՝ «Պետական գույքի սեփականաշնորհման (մասնավորեցման) մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» և «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքների կարգավորումների հիման վրա մեկ նոր՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի նախագծի ընդունում, որի արդյունքում իրենց ուժը կորցրած կճանաչվեն նշված օրենքները: Պետական գույքի կառավարման գործընթացը կանոնակարգող օրենսդրության բարեփոխման ուղղությամբ՝ պետական գույքի մասնավորեցման և կառավարման գործընթացը կանոնակարգող երեք ներկայումս գործող ՀՀ օրենքների հիման վրա մշակվել է «Պետական գույքի կառավարման մասին» նոր օրենքի նախագիծը: Միաժամանակ հայտնում ենք, որ Կոմիտեի կողմից մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ՏԿԵՆ 12.03.2024թ. թիվ ԳՍ//7811-2024 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի N 1063-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է տվյալ կետի կատարման ժամկետն երկարաձգել 2025 թվականի առաջին եռամսյակ:
6.	«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո պետական գույքի կառավարման դաշտը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման ուղղությամբ միջոցառումների իրականացում	Պետական գույքի կառավարման գործընթացը կանոնակարգողներկայիս վեց տասնյակից ավելի իրավական ակտերի կիսով չափ կրճատում՝ ապահովելով կառավարման գործընթացի կանոնակարգման գործընթացի	2024 թվականի 4-րդ եռամսյակ	Տվյալ կետի կատարումն կիրականացվի «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո:

		կանոնակարգման միասնականությունը, պարզությունը, հստակությունը, ընկալման տեսանկյունից մատչելիության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև որոշումների ընդունման ժամկետների կրճատումը, կառավարման օպերատիվության բարձրացումը, նույնանման գործընթացների կանոնակարգման և հաշվետվությունների ներկայացման բնագավառում անհարկի կրկնությունների բացառումը		